ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

СОЮЗ АРХИТЕКТОРОВ
АРМЕНИИ

THE UNION OF ARCHITECTS
OF ARMENIA

ՀՀ, Երևան 0019
Մարշալ Բաղրամյան պող.17

РА, Ереван 0019
пр. Маршала Баграмяна 17

RA, Yerevan 0019
av. Baghramyan 17

N: ԿՀ 01/01

Հեռ: +37410 / 561506
Тел +37410 / 583242
Phone:
e-mail: armarchunion@mail.ru

"05" 05 2017թ.

Վանաձոր քաղաքի քաղաքապետ
Պր.-ն Մ. Ասլանյանին

Հարգելի պարոն Ասլանյան

Վաստակաշատ ճարտարապետ, 1964 թվականից Հայաստանի ճարտարապետների միության անդամ Ռաֆիկ Բոշյանի ճարտարապետական-աշխատանքային գործունեությունը երկար տարիներ կապված է եղել Վանաձոր քաղաքի հետ:

1960 թվականին ավարտելով Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժինը՝ Ռաֆիկ Բոշյանն աշխատանքի է անցնում «Հայպետնախագիծ» ինստիտուտի գլխավոր հատակագծի բաժնում, որտեղ հեղինակային խմբի կազմում մասնակցում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի մշակմանը:

1966 թվ. նշանակվում է Վանաձոր քաղաքի գլխավոր ճարտարապետ՝ պաշտոնավարելով 1966-1991 թթ. և 1996-1999 թթ.:

Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի հաստատումից հետո նա ղեկավարում է գլխավոր հատակագծի իրականացման աշխատանքները, նախագծում և իրականացնում է բազմաթիվ բնակելի, հասարակական, արդյունաբերական, առողջապահական շենքեր, բարեկարգման աշխատանքներ, տեղադրում ճարտարապետական փոքր ձևեր:

ՀՀ Լոռու Մարզ
Վանաձորի Քաղաքապետարան
«11» 05 2017թ.
Մտից N 119 Գործ N 3148

Ռաֆիկ Բոշյանը երկրին ու Վանաձոր քաղաքին անմնացորդ նվիրված քաղաքացին ու ճարտարապետն էր: Նա մեծ հարգանք էր վայելում Հայաստանի Ճարտարապետների միության անդամների և արվեստակից գործընկերների կողմից:

Հարգելի պարոն քաղաքապետ, հաշվի առնելով վերը նշվածը՝ խնդրում եմ քննարկման դնել Վանաձոր քաղաքի փողոցներից մեկը վաստակաշատ ճարտարապետ Ռաֆիկ Բոշյանի անունով անվանակոչելու հարցը:

Հարգանքով՝

ՀՃՄ նախագահ,

ՀՀ վաստակավոր ճարտարապետ Մկրտիչ Մ. Մինասյան